

Ն Ս Մ Ա Կ Խ Մ Բ Ա Գ Ր Ա Ւ Թ Ե Ա Ն

Պատասխան իմ բննադատին)

Ուսուահայ բառարանների նկատմամբ պ. Ստ. Մալիսաս
սեանը յայտնի է իրեւ խիստ քննադատու Ասածիս պազցոյց
են հետևեալ փաստերը Երկու տարի առաջ լոյս տեսաւ
Գուրիզոն Լուսինեանի ֆրանս-հայ բառարանը, որ իր նախորդ
դի, Նորայր Բիւզանդացու բառարանի համեմատութեամբ յետա-
դիմուրիւն եր: Բայց պ. Ստ. Մալիսասեանը այդ բառարանը
քննադատեց հանգիստ, նոյն-իսկ համակրական տոնով ^{**)} Բայց
հիմա տևաէք, թէ նոյն պ. Ստ. Մալիսասեան ինչ զարհուրելի
դատավճիռ է կարդացել խեղձ Արքուղու Յովհաննիսեանի բա-
ռարանի զլիխն. «Մենք այս բառարանը (խօսքը, ի հարկէ, պ.
Արքուղու Յովհաննիսեանի բառարանի մասին է, որ լոյս տես-
աւ 1888թ.) գտնում ենք խիստ պակասաւոր, ժամանակի
պահանջներին չը համապատասխանող, վատ, ուրեմն և վիճասա-
կար մի շարադրութիւն, որի երեւան գալլ ամօթ պէտք է հա-
մարուի ինչպէս մեր գրականութեան, նոյնպէս և հասարակու-
թեան համար, որ կարող է այդպիսի գրուածք իր մէջ հանդուր-
ժել... եթէ պ. Յովհաննիսեանի հրատարակած զիրքը կամն-
նանք բառարան կամ բառ գրքոյկ կոչել՝ այս բառարանը ամօթ
և նախատինք կը լինի ոչ միայն պ, հեղինակի անուան, այլ և
բոլոր այն ժողովրդին, որի մէջ և համար որ տպագրուել է.
այս բառարանը բազմատեսակ թերութիւններով և անսերելի
սիսալներով լի լինելով՝ մեծամեծ վնասներ կարող է բերել ան-

*) Տպագրում ենք այս լողուածը, լարգելով audiatetur et altera pars
սկզբունքը.

**) Տես „Մուրճ“ 1901թ.

հըմուտներին (համբակներին և աշակերտներին), ուստի և խըստիւ պէտք է արգելուի նրա գործածութիւնն ուսումնարաններում *»:

Այսօր քննադատելով մեր կազմած ոռուս-հայ լիակատար բառարանը, պ. Ստ. Մալխասեան ասում է, «Եթէ համեմատելու լինենք այս բառարանը իր նախորդների, երեցիոխեանի և Ա. Յովհաննիսինանի բառարանների հետ՝ սա նրանցից բարձր է, այն էլ մի խնի աստիճան բարձր, նրանք խիստ պակասաւոր գործեր են եղել, բացասական յատկութիւններով լիքը. այս-ինչ սա անպայման ունի մի քանի զրական կողմիր, իսկ պակասութիւններն էլ այն աստիճան խոչոր չեն՝ ինչպէս նրանց մէջ»։ Պ. Մալխասեանը իր խօսքը մասնաւորելով, զտնում է մեր բառարանի «ոռուսերէնի մասը» յաջողուած: «Ընթերցովը—գրում է պ. Մալխասեանը, ամենայն վստահութեամբ կարող է զիմել բառարանի այս մասին, ուր կը գտնէ շատ օգտակար, բաւական մանրամասն, և որ զիխաւոր է՝ համարեա անփառ ցուցումներ որև է ոռուսերէն բառի ուղղագրութեան, շեշտագրութեան, քերականական ձեւերի եւ այլն մասին»։

Բայց և այնպէս պ. Ստ. Մալխասեան այս մասի վերաբերմամբ մի քանի նկատողութիւններ է անում, որ մենք ուղիղ չենք գտնում: «Յազմաթիւ հնացած բառեր» և «զաւառարանութիւններ» չը կան մեր բառարանում: «Բարանայ տկυրա»ն ոչթէ «մի յետ ընկած գաւառում միայն», այլ ոռու զրական լեզուի մէջ խիստ գործածական գարձուածք է, մինչեւ անգամ հայերէն էլ թարգմանուած է, այն էլ սխալ թարգմանուած: Լ. Տօլսոտի «ոչչակաւոր «Յօքրեսենք» վէպում կարդում ենք. «տկուրա բարանայ! Կեց հոգուեց!». պ. Տ. Յովհաննիսինան, այդ վէպի թարգմանիչը, բառացի թարգմանում է. «Ինչ ես ձայնը գլուխդ գցել, թիբուկի կաշի» («Յարութիւն», եր. 127): Արդ՝ թիբուկի կաշի հայերէն հայհոյանք չը կայ. «բարանայ տկուրա» նշանակում է փուչ, լիմար կին, ինչպէս մենք մեր բառանում բացատրել ենք:

Մեր արած կրծատումը տեղ ինայելու համար անհրաժեշտ էր: Փորձը ցոյց է տալիս, որ ընթերցովը հէնց առաջին ժամին զիխի է ընկնում, թէ բանն ինչո՞ւմն է: Այդ կրծատումը (օր. Դօ||բավա;—բավիտ;—բավլենի;—բավլիված;—բավօք) մենք արել ենք միմիայն տեղ ինայելու համար, ամենեւին ուշագրութիւն չը գարձնելով բառի լեզուաբանական և քերականական կողմերի

*). „Արաքս“ 1899, գիրք Ա. յունիս, եր. 142 և 160.

վրայ, ԶԵ որ իւրաքանչիւր բառ առանձին ստուգարանուած և բացատրուած է Բայց շեշտադրութեան կանոնները մեծ ճշութեամբ պահպանուած են (օր. ան բառարան, եր. 53 թ. Ետավա; եր. 193 Վաշիվալինի և Վաշիվալիցա; եր. 208 թ. Գերբիկե. և գերբովայ; եր. 266 ա. ճալեկտիկ... ճալեկտի և այլն): Յամենայն դէպո պ. Ստ. Մալխասեանի առաջարկութիւնը այլ կերպ վերոյիշեալ բառը բաժանելու, այն է. Ճօբավա (ա, Ճօբավանի... կոպիտ սխալ է տողադրութեան կանոնների դէմ) (Յ. Գրոտ, Պրավոնշան, ստ. 98, աշ. 18-օւ). ՄԵՆՔ բոլորովին ուզիդ ենք փարուել. ԱԿԿԼԻՄԱՏԱՑԱՅԻ բառը «զերմանական բառ միրտելով» Բառի արմատի մասին մեր կազմած ոչ-լինգվիստիկական բառարանում խօսք չէ կարող լինել, այլ լոկ նրա պատմական ծագման մասին: Արդ, ԱԿԿԼԻՄԱՏԱՑԱՅԻ բառի գաղափարը ներին անծանօթ էր. այդ բառը ծնունդ է առել Գերմանիայում և արդի եւրոպական կենաքի բարդութիւններից մէկի արտայայտութիւնն է: Ծուսները այդ բառը վերցրել են գերմանացիներից և ոչ թէ յայներից: Ճիշտ այսպէս էլ փարուում է երեւելի Դրօսն իր ուղղագրութեան մէջ: ՄԵՆՔ խնդրում ենք պ. Մալխասեանին բանալ Mayers Kons. Let. Amphora բառը, որի առաջ կը գտնէ «dat» ցուցումը:

Պ. Ստ. Մալխասեանի նկատողութիւնների ամրողջ թափն ընկնում է մեր բառարանի երկրորդ, «Հայերէնի մասին» վրայ: Պ. Ստ. Մալխ. մեզ վերագրում է մի շարք տառասխալներ, որոնք մնածագոյն մասամբ տպագրական սխալներ են. զեղչ ևս եւս գրում եմ չով, ինչպէս և պ. Ստ. Մալխասեանը (ան բառարան Վաչետնայ... զեղչած. Վաշետ զեղչ, զեղչում. Վաշետնայ... զեղչելը... զեղչել, զեղչուել. Ջիսոնտեր... զեղչող... մուրհակաղեղչութիւն, մուրհակի զեղչումը... մուրհակը զեղչել կամ զեղչելու տալ... զեղչով զեղել... մուրհակաղեղի... մուրհակաղեղը, այն զեղջը և այլն): Հրահանգ բառը մենք նոյնպէս գրում ենք գով, ինչպէս և պ. Ստ. Մալխասեանը (ան բառարան եր. 265 Դիսպոզիցիա... գրաւոր հրահանգ... հրահանգ. եր. 172 Վայստրօբայ... հրահանգել, եր. 263 ճիշտակա... հրահանգախօսութիւն, — գախօսական, — գախօս... հրահանգիչ. եր. 265 ճիշտակալուածական, — գախօս... հրահանգիչ. եր. 265 ճիշտակալուածական, — գախօս... հրահանգիչ): Զարաչար սփալւում է պ. Ստ. Մալխասեան, թէ չէ կարելի գրել յանկերգ: Կայ յանգեմ և յանկեմ, յանգիմ, և յանկերգ, (տես. Առձեռն բառարան եր. 581—82), ուրեմն կայ և յանգերգ և յանկերգ: Ինձ և ինձ հետ, ինչպէս լիայոյս եմ, ընթերցողներին մնում է զարմանալ պ. Ստ. Մալխասեանի վրայ, որ նա կարծում է, թէ հրահանգ բա-

ո՞ի ուղղագրութիւնը ինձ անծանօթ է, ինդունում եմ պ. Ստ. Մալխասեանի ստուգաբանութիւնը ներգոյական բառի մասին ինչպէս և ժպիրն և խոչընդոտ բառերի ուղղագրութիւնը, Բայց պ. Ստ. Մալխասեանն էլ չարաշար սիսալում է. կարծելով, թէ զերեղմանոց սիսալ է և պէտք է զրել զերեղմանոց ^{*}). Զարաչար սիսալում է պ. Ստ. Մալխասեան, թէ «զրեթէ» սիսալ է. անփափիր գրում են և գրեթէ և զրեթէ (տես Առձեռն բառարան գրել բայց տակ, Վենեսելիկ, բ. տիպ): Անխոփիր գրում են ամէն և ամէնսախոնարհ և ամէնսախոնարհ, ամէնսակարող և ամէնսակարող: Զարաչար սիսալում է պ. Ստ. Մալխասեան, թէ «անհարազատ և սիսալ» են ցատկի, կայսրազն, սայթուն, սայթել, գարնանացնել քծուիլ, լինիլ ընկնիլ ձեւերը և պէտք է զրել ցատկի, կայսերազն և այլն: Պ. Ստ. Մալխասեան իր յօդուածում, եր. 198-99 գրում է, «պէտք է դիմեն... պէտք է խորհրդակցի, պէտք է մտածէ, աշխատի, պէտք է հնարեն...»:

* Եոց վերջադրով բառեր կան, որոնք կամ առարկաների տեղն են ցոյց տալիս և Կամ քանակութիւնը, օր. լարդ-ա-նոց, ուսուցչ-ա-նոց, անհան-ա-նոց, հաւ-ա-նոց, զժ-ա-նոց. և հնդ-ա-նոց, ութ-ա-նոց պուղ-ա-նոց և այլն ենչպէս երեսում է, պ. Ստ. Մալխասեան նոց վերջադրին անդեղչելի է համարում, մինչդեռ այս վերջադրին երբեմն սղուելով դառնում է ոց, օր. մատն-ա-նոց=մատն-ոց=մատնոց, կութ-ոց=կթ-ոց (առմկարար քթոց), հեծան-ա-նոց=հեծան-ոց (հորսելի), կանան-ի-ա-նոց=կանան-ոց=կանանոց և այլն: Խակ պ. Ստ. Մալխասեանը մեր բառարնից առաջ բերած բառը, ինչպէս երեսում է, այսպէս է ստուգաբանում. զերեղման-ա-նոց=զերեղման-նոց=զերեղմաննոց: Սակայն այս սղումը զաւոռական է, իսկ գրական լեզուի մէջ զործածական է զերեղմանոց ձեւը (տե՛ս օր. պ. Նորար Քիվանդացոյ Քրանսերէնից հայերէն բառարանում Cimetière բառը, որի դիմաց դրած է զերեղմանոց): Առհասարակ պ. Ստ. Մալխասեանի նկատողութիւններից երեսում է, որ նա խստապահանջ է և մոռանում է արդի աշխարհաբարի լեզեղուկ դրութիւնը: Մեր բոլոր նոր գրողներն և թարգմանիչներն գրում են աշխարհայիցողութիւն (=աշխարհ+նայել). ուստի և լայտնի չէ, թէ ինչո՞ւ հ-ն սղուսում է), ինձ հետ և իմ հետ, բայց աշխարհ և լեզու կաջել և հաջել և հաջել, կ գնամ և կը գնամ և այլն և այլն: Պ. Ստ. Մալխասեան և մենք շատերս Միկիթարեան հալլերի հետեւողութեամբ գրում ենք. գրաբար, աշխարհաբար: Բայց ահա՞ թէ այս առթի հանգուցեալ լեզուաբան Սարդիս Սարգսեանցն ի՞նչ է ասում, «Աշխարհաբար բ-ով դրելը (աշխարհաբար, գրաբար) ես սիսալ եմ համարում. այդ բառը բարդուած է կամ բառ, կամ (բար)բառ բառերի հետ (իբր՝ աշխարհամօս, գրախօս, աշխարհքի լեզու, գրքի լեզու) և արտասանելիս էլ աւելի լսելի է ու քան բ, մինչդեռ աշխարհաբար մակրաւ է, ինչպէս զազանաբար, առիծաբար և այլն, օրինակ՝ զազանաբար գրառել, առիծաբար յարձակուել—բայց ո՛չ զազանաբար մարդ և այլն՝ («Սուրճ» 1892 թ. Ապրիլ, եր. 626): Այս զիտնական պատճառաբանութիւնը այնպէս կտրուկ է, որ ես միան ընդհանրութեան հնագանդուելով զրում եմ աշխարհաբար, գրաբար:

Պ. Ստ. Մալիսասեանի վրայ պարագ է մառմ բացարելու, թէ ինչու պէտք է գրել խորհրդակցիլ և ոչ խորհրդակցել, աշխատիլ և ոչ աշխատել, բայց շատել և ոչ շատիլ, ընկնել և ոչ ընկնիլ և այնու Մենք զրաւմ ենք աւիլ և ասնդուփս, որովհետեւ այս բառերը կենդանի ժողովրդի բերանում այսպէս են նշուում և այս ոչ պ. Ստ. Մալիսասեան և ոչ էլ մի օրիչ ոք կարող է հերքեր Յղութիւն և յղանալ բառերն ուրիշ լեզուներում փոխարերական նշանակութիւն չունին. մինչդեռ հայերէնում նրանց փոխարերական նշանակութիւնը աւելի գործածական է՝ քան բուն նշանակութեամբ զործ ենք ածում լրանալ և յղութիւն (օր. մի միտք յղանալ), իսկ բուն նշանակութեամբ զործ ենք ածում յղանալ և յղիութիւն ձեւերբ Խոստովանում ենք, որ այս նորաձեւութիւն է, բայց այս նորաձեւութիւնը նպաստում է լեզուի կանոնաւորութեանը և սիսալ չէ. ԶԷ որ արի ածականից կազմուել է նոյն ձեւով արիութիւն գոյականը, այսպէս և զուլորչի գուլորչիանալ, կզզի, կզզիանալ և այն: Կարին (ատամ), պղպնակ, յարդում բառերը սիսալ են տպուած (պէտք է կարդալ կտրիչ, պղպջակ և նարբում) և այս ապացուցանել անկարող ենք, «Երեմեայ յզի կինարմատ, ծննդկան» բոլորովն ուղիղ ենք թարգմաներ Սխալում է պ. Ստ. Մալիսասեան կարծելով, թէ ծննդկան միայն ծնած, այսինքն ազատւած, երեխայ բերած կին է նշանակում: Ծննդկան նաև նշանակում է ուր պիտի ծնանին (ան Առձեռն բառարանում ծննդական բառը), ուրեմն լիլ:

Պ. Ստ. Մալիս. մեր բառարանում «օտարութիւն» և անհասկանալիք բառեր եւս գտել է: Դոքա են, արանինինակ, արանինինակաւոր, նեց, բաղցրիս, աբերենի, ծո (յ) լ, յանբուկի ես գրել եմ. Բալախոն ա. (պարսկերէն) արանինինակ (արձակ վերնազգեստ, որ զիւղացին ամառը հագնում է դաշտային աշխատանքների ժամանակ): Այս ես արել եմ անձարացած, որովհետեւ բալախոն բառի համար հայերէն գրական բառ չը կայ, մինչդեռ Նազախի գաւառում գործ է ածում արանկոհնակ բառը, որ իր իմաստով ճիշտ համապատասխանում է բալախոն բարին: Բայց չեմ զլացել արանկոհնակ գաւառական բառը բացարել: Պ. Ստ. Մալիս, իմ «իմնջոյք տալ, ինչոյք սարքել, «մաղարիչ առնելք բացատրութիւնը համարում է «օտարութիւն» և տգեղ» և իր կողմից առաջարկում է «ջուրը քաջել, ջրել, ձէթվէթելիթ տալ, առնելք», որ ինձ նոյնպէս անհասկանալի է, ինչպէս պ. Ստ. Մալիսասեանին արանկոհնակ բառը: Ուրեմն դժուարութիւնը

ինդրի մէջ է, բառարան կազմով ոչ մի մեղք չունի, ես ի՞նչ մեղաւոր եմ, որ պ. Ստ. Մալխասեանին հեց, ոգութենի, արիթենի, ծոյ (յ) լ, յամըուկ, խղցրիս գրական և յաձախ գործածական բառերը անհասկանալի են *):

«Գուեհկարանութիւն» և «օտարաբանութիւն» եւս պ. Ստ. Մալխ. գտել է մեր բառարանում՝ «Միայն 184 երեսում պատահում ենք,—գրում է պ. Ստ. Մալխ.—այս գուեհկարանութիւններին, դալմաղալ բարձրացնել, բօրակի, բօրակել, բօլու ամբողջ երկարութեամբ գետին փոռուել, ինչով պակաս կը լինէր, եթէ ասէինք աղմուկ բարձրացնել, ծեծ, ծեծել կամ բակել»... Պ. Ստ. Մալխ. մինչեւ անգամ զլանում է մեր բառարանի երեսները ձշութեամբ նշանակելու: Եր. 184 միայն գըտնւում է. ՎԵՏԵՐԱ (ուամկաբար) ծեծել, բակել, քօթակել, իսկ պ. Ստ. Մալխասեանի յիշած միւս տեղերը ուրիշ երեսներում են գտնւում: Եր. 84 ԵԿԱՆԻ ՅԱՅԱԾ ՀԱՅԱԾ Աղմուկ, կոիւ, «Պալմաղալ» բարձրացնել: Եր. 161 ՎԵԴՐԱՅ-Ե. (ուամկաբար) ԽԻՍՈՒ ծեծել, բակել, քօթակել, «զիկել»: Եր. 259 ՃԵՐ Ի. (ուամկական բառ) ծեծ, այն, քօթակ, զիկոց: (Չը կարողացայ գտնել միայն այն երեսը, ուր գործ եմ ածել բօլի բառը): Ինչպէս ընթերցողը տեսնում է, պ. Ստ. Մալխասեանի պահանջած բոլոր բառերը կան, այն էլ առաջ են զրուած: Վերոյիշեալ ուերէն բառեր իրանք ուամկական բառեր են, իսկ հայերէն ուամկական բառերը, ինչպէս բառարանիս համառօտութիւնների ցուցակում յայտնել եմ, չակերտների մէջ են զրած: Ես գարձեալ չեմ հասկանում, թէ էլ ինչ կարող էի անել որ պ. Ստ. Մալխասեան գոհ մնար Եւ զարմանալին այն է, որ «գուեհկական» բառերի ոխերիմ թշնամի պ. Ստ. Մ. Քիչ յետոյ իր յօդուածում (Եր. 199) գործ է ածում զիմից ուադ անել դարձուածքը: Գրական բառերից յետոյ ուամկական և ժողովրդական բառերի գործածութիւնը մեր բառարանում և այն լաւ կողմն ունի, որ մեր ընթերցողներից մի լաւ կոնտինգէնտ, գուրս գալով ժողովրդի միջից, մտնելով պետական վարժարան և ապա համալսարան, յաճախ անձանօթ է մնում հայ գրական լեզուին: Սոցա ժողովրդական և ուամկական բառերն աւելի հասկանալի են, քան գրական բառերը: Թողլ չը զարհուրի պ. Ստ.

*). Հեց բառը ես գործ եմ ածել միմիայն անուի շրջանակի նշանակութեամբ: Պ. Ստ. Մալխ. ցուց չէ տուել այն տեղը, ուր ես ըդուզալի նշանակութեամբ ես իբր թէ գործ եմ ածել: „Շուշանի գետեղը“, որ գրաբարդէտ պ. Ստ. Մալխ. կարդացել է այ գետեղը: Ես բառացի վերցրել եմ հայր Մէնէվիշեանեց (տ. Բուսարանութիւն, Եր. 54):

Մ. այդպիսի բառերից Ստամետկան, ժողովրդական և գաւառական բառեր գործ են ածում մեր բոլոր նոր զրովներն և թարգմանիչները Պ. Ատ. Մալխատեանից ոչ պակաս հմտա լեզուաբան, հանգուցեալ Ա. Ստամետկան, իր պքանչելի զրախօսութեան մէջ, որ գրել է այս եազուրեանի բառարանի ասթիւ, կշտամբում է, որ եազուրեանին, որ նու ոմք շարք թթական բառերի, որոնք անգառնայի կերպով մտել են մեր նոր լեզուի մէջ, չէ զետեղել իր բառարանում Այդ բառերն են, զօշադ, հօրակ (զնալ, տանել), ախր, դպրդ, հէշ, նեքար և այլն *).

Պ. Ատ. Մալխատեան մեզ մեզագրում է, որ մենք պաել ենք ուսւա եկեղեցու ուսկօլ և ոչ ներձուած Խնչակս երուամ է, պ. Ատ. Մալխատեանը թիւու հասկացողութիւն ունի ուսւ եկեղեցու ուսկօլի մասին Եկեղեցեկան պատմութեան մէջ յիշուած հերձուածողները լոկ կրօնական միութիւններ էին, կրօնական ձգառմեններ ունի ուսւ եկեղեցու ուսկօլը, Անա այդ նրբութիւնը, (նիուանսը) պահպանելու համար է, որ ես գործ եմ ածել ուսկօլ Կատարեալ մոլարութիւն է, պաել թէ հերձուած բառը բարտմական հօնակութեամբ նիւչ համապատիսնում է ուսւսերէն քաշու բառնեւ Եկեղեցական պատմութեան որ դրանում է պ. Ատ. Մալխատեանը կարգացել 13 միլիոն հերձուածողներ...

Միալ է և այն բացատրութիւնը, որ պ. Ատ. Մալխատեանը տալիս է ամուսնու և ամուսնու ամականներին, Պ. Ատ. Ամուսնու ամականի զիմաց ակադէմիական բառարանում օրինակներ է գտել Ասծու մասին, իսկ ամուսնու պիմաց չէ գտել և դրանից խարուած ասում է, «ամուսնու պիմաց» պարեկի է գործ ածել և մարդկանց համար, իսկ ամուսնու պիմացն Ասծու համար», Գրօտի նման վիճուխտ-լեզուարանը զրում է, «ամուսնու պիմաց»=«ամուսնու պիմաց»=«ամուսնու պիմաց»=... ամուսնու պիմաց»=... պահանջական և ամուսնու պիմացի համարձակ և անզգոյլ է, կարդալով մեր բառարանում «բազմական պատկանած առինքնակ» են բիրենք, մենք խնդրում ենք պ. Ատ. Մալխատեանին բացել Հրցե, Исторические Очерки, стр. 412, 10-й изд. 6-ое 1897 թ. և կարգալ հետեւեալ տողը, ամուսնու պիմաց=պիմաց պատկանած առինքնակ»=... ամուսնու պիմաց»=... պահանջական և ամուսնու պիմացի համարձակ և անզգոյլ է, կարդալով մեր բառարանում «բազմական պատկանած առինքնակ» են բիրենք, մենք խնդրում ենք պ. Ատ. Մալխատեանին բացել Հրցե, Исторические Очерки, стр. 412, 10-й изд. 6-ое 1897 թ. և կարգալ հետեւեալ տողը, ամուսնու պիմաց=պիմաց պատկանած առինքնակ»=... պահանջական և ամուսնու պիմացի համարձակ և անզգոյլ է, կարդալով մեր բառարանում «բազմական պատկանած առինքնակ» են բիրենք, մենք խնդրում ենք պ. Ատ. Մալխատեանին բացել Հրցե, Исторические Очерки, стр. 412, 10-й изд. 6-ое 1897 թ. և կարգալ հետեւեալ տողը, ամուսնու պիմաց=պիմաց պատկանած առինքնակ»=...

*.) ՄԱԻՐՅ 1892 թ. № 2, եր. 299:

կազիր թարգմանելով աչքի առաջ եմ ունեցել Տուրքենսիի
«Степной король Лиръ», гл. XII.

Բժանդինդրութիւն է բարագի թարգմանութիւնը
«Փողոր սխալ» հրատարակելու ի՞նչ տարբերութիւն կայ փոփո-
խորեան (այս մեր բացարութիւնն է) և «զարդարուն զանու-
զանակերպութեան» (այս պ. Ստ. Մալխասեանի բացարութիւնն
է) մէջ, այդ մենք այժմ ևս չենք հասկանում: Միակ «Փողոր
սխալը», որ պ. Ստ. Մալխ. մեր բառարանում գտել է, այդ այն
է, որ մենք որցը բառը փոխանակ առուտութիւն, աճուրդ ենք
թարգմանել: Բայց թող պ. Ստ. Մալխասեանն իրան անսխա-
րական չը համարէ: Օրինակ, պ. Ստ. Մալխասեան պ. Ար. Յով-
հաննիսեանի բառարանը քննադատելիս նամալիտ կոմը ГОЛОВУ
նախադասութիւնը թարգմանում է: «մէկի գլուխն օճառել,—
մէկի գլուխը իւղ քանել» *):

Պ. Ստ. Մալխասեանը մեր բառարանում սխալ է համա-
րում նաև Աշյորն բառի թարգմանութիւնը: Նա բացական-
չում է: «Եթէ պատահենք ռուսերէն, օրինակ, այսպիսի մի խոս-
քի—սերեբրանի, աշյորնի, ուժեւութիւնը—ինչպէս պէտք է
թարգմանենք.—արծաթէն ծակծկուած, ծակոտկէն, ցանցակերպ,
նօսր, թափանցիկ աշտանակը»: Պրն. Ստ. Մալխասեանի հար-
ցումը միանդամայն իրաւացի կը լինէր, եթէ ես մինասների և
ծալրածուների համար լինէի բառարան կազմած... Անհւասիկ պ.
Ստ. Մալխասեանի առաջարկած նախադասութիւնն կոկիլի հա-
յերէն թարգմանութիւնը հէնց մեր բառարանի բառերով: «ար-
ծաթէ աշտանակ ցանցակերպ գրուագով» (կամ նաշխով): Ա-
շյորն ածականի ստուգարանութիւնը շատ պարզ է: à jour
(jour լոյսի նշանակութեամբ) և մեր թարգմանութիւնը բոլո-
րովին ճիշտ է: Գերմանացին էլ ուրիշ կերպ չէ թարգմանել:
Պալլօվսկու բառարանում (Русско-Немецкий словарь, Рига 1900
г.) վերև յիշած բառը թարգմանուած է: «durchsichtig, durchbro-
chen»: Այս բառերը ճիշտ համապատասխանում են մեր թարգ-
մանութեան «ցանցակերտ, ծակոտկէն, նօսր» բառերին, որով-
հետեւ ծակուած բառացի նշանակում է բափանցիկ, բայց
գործուածքների մասին կիրառուելով նշանակում է ցանցակերպ,
վանդակակերպ, նօսր»:

Պ. Ստ. Մալխասեանի նկատողութիւնը բարենպէ բառի

*): ՏԵՇ. «Թարգ» 1899, գիրք Ա. լուլիս, էր. 143, նամալիտ կամ
բարենպէ կոմը ГОЛОՎՈՒ նշանակում է: «մէկին լանդիմանել, շշպրել,
ներկել, նսկ մէկի գլուխն եղ քանել» մէկի գլուխը եղել բուրովին ուրիշ
բան է նշանակում:

Նկատմամբ կարող է ուզիք լինել. Մեզ գործնական մարդ ժամանակակից ոգով անուանող պ. Ստ. Մալիս, վերջին տարիներս ինքը հայկարանութիւնից անցել է կաթնաւնառեւթիւնն, ուստի և նա կարող է արեցվ բարի ճիշտ նշանակութիւնը գիտենալու Բայց և անպէս պէտք է ասենք, որ արեցվելու նոյնքան տարբերութիւնն է ամեն մի հայի ձանօթ մածնից», որքան և պրօտօնաշահ: Հային ծանօթ մածունը ուսւը անուանում է ԿԱԾԵ մօլոկօ, ուրիշ ոչինչ:

Պ. Ստ. Մալխասեանը նոյնպէս պահանջում է, որ մենք ամեն մի ուսւերէն և օտարազգի բառ անպատճառ հայերէն թարգմանենք, իսկ ճարահատեալ դէպում օտարազգի բառը զնենք և մեզ մատնացոյց է անում պ. Նորայր Բիւզանդացի և հայր Քաջունի բառարանագիրներին: Սակայն այս հեղինակները պ. Ստ. Մալխասեանի համար անխսալական են, բայց ոչ մեզ համար: Երաւ, այս հեղինակները ճիզ են թափել ամեն մի բառ հայաշահնել, բայց զրա հետեանքն եղել է իրանց բառարանները մի շաբթ շնորու բառերով լցնելը. որ մեզ երբէք հաճելի չէ կարող լինել: Մենք չենք հաւասառում, որ բառարանագիրը կարող է լեզու ստեղծել և որ բառարանը յաւիտենական բան է: Ոչ, այդ մոլորութիւն է, լիզու կազմողը ժողովուրդն և նրա զրականական աշխարհն է, բառարանը համանակաւոր բան է: Պ. Ն. Բիւզանդացու բառարանի հրատարակութիւնից մինչև այսօր անցած ժամանակամիջոցում հայ ժողովուրդը և զրականութիւնը գտել, հնարնլ են բազմաթիւ հիմնալի հայերէն բառեր և դարձուածքներ, որոնց մօտ պ. Նորայրի շնորու բառերը ոչինչ են: Հենց վեր առնենք պ. Ստ. Մալխասեանի լիշած ՌԻՕՄՑ բառը Այդ բառը պ. Ն. Բիւզանդացին թարգմանել է «Հոգապայում վերջին բառն ամենեւին չէ համապատասխանում ՌԻՕՄՑ բառն»: Ուստի և ես այսպիսի բառեր չեմ կարող ընդորինակել վերև յիշուած հեղինակից: Ամեն մի բառի դէմ անպատճառ մի հայերէն բառ դնելը ունի և այն վեսար, որ զրանով բառարանագիրը թարգմանիչներին ոչ միայն յաճախ թիւրիմացութիւնների մէջ է զցում, այլ և կաշկանդում է նրանց մաքի թոփշները, նրանց առաջ քար է զցում և թոյլ չի տալիս նըրանց աղատ մոռածելու և հնարելու:

Պ. Ստ. Մալխասեանը այս առթիւ խօսելով, մեզ յորդում է օրինակ առնել այս բարեխիղճ բառարանագիրներից, և ամբողջ օրեր մթնեցնել գիշերներ լուսայնել, տասնեւակ գրբերի գիմել մի բառի համար: Ինչպէս երեւում է, պ. Ստ. Մալխասեանի ամենեւին հոգոր չէ այն խայտառակ դրութիւնը, որի մէջ այսօր գտնւում է ուսւահայ հասարակութիւնը: Ահա

երրորդ տարին է, որ աշխարհիս երեսին ծախու ոչ մի ռուս-
հայ բառարան չը կայ, ընթերցողը այրուելով՝ փոթոթուելով մի
գրախանութից միւսն է վազում, կը ինակի գին է առաջարկում,
բայց ամեն տեղ մերժում է ստանում: Շատերը բառարանի
ձեռք զարկեցին, յայտարարութիւններ տուին, բայց ոչ ոք այս
հասարակական աղէտին օգնութեան չը հասաւ, եւ ահա այս
ժամին պ. Ստ. Մալիսասեանը այսպիսի պահանջներ է անում:
Դարձեալ պէտք է ասենք, որ մի հեղինակ կարող է իր գործի
վրայ 14 տարի «թշուառագիրան» աշխատանք թափել, իսկ միւ-
սը միայն 8 տարի և նոյն հետեւանքներին հասնել: Հէնց սրան
պարզ ապացոյց է, պ. Նորայր Բիւզանդացու անպայման բարե-
խիդ և լուրջ բառարանը: Բայց ինչ օգուտ, քանի որ այդ գը-
նահատելի բառարանի էջերը հայ ժողովրդի մասսայի համար
փակ են: Պ. Ն. Բիւզանդացին գրաբարամոլութիւնից կուրա-
ցած կազմել է ֆրանսերէնից գրաբար բառարան, մոռանալով
այն հանգամանքը, որ մենք ունենք աշխարհիկ լեզու, որ իր
բնորոշով և ձկունութեամբ, անհամեմատ աւելի համապատաս-
խանում է ֆրանսերէնին, քան մեռած գրաբարը: Այն ինչ «պլա-
յութիւններ» են, որ պ. Ն. Բիւզանդացին տաժանելի աշխա-
տանք թափելով գրաբար ձեռագիրներից և դասական մատենա-
գիրներից քաղել և լցրել է իր բառարանը: Այդ քաղուածքները
շատ անգամ բարաստ են բառարանի համար: Աւելացրէք սրան
այդ բառարանի անմատչելի գինը և կը տեսնէք, որ պ. Նորայր
Բիւզանդացու բառարանից հայ ընթերցողների 99% -ը ոչ մի
օգուտ չունի:

Պ. Ստ. Մալիսասեանի պահանջը, թէ մենք մեր բառարա-
նում պէտք է բացատրէնք կենդանաբանական, բուսաբանա-
կան, հանքարանական և քիմիական բառերը (նրանց «գլխաւոր
յատկութիւնները—այսինքն՝ զիտական դասաւորութիւնը, նկա-
րագրութիւնը, ինչ բանի գործածուելը և այլն—պահանջում է
պ. Ստ. Մալիսասեանը) մեր ծրագրից դուրս է: Եթէ այդ անէ-
ինք, մեր բառարանին կ'աւելանար 100—150 երես, որով և գինը
պիտի ստիպուած բարձրացնէնք (պ. Ստ. Մալիսասեանը խոս-
տովանում է, որ մեր նշանակած գինը թանկ չէ): Բայց սրա-
նից կան կենդանիներ, բոյսեր և հանքեր, որոնց պատկերները
անհրաժեշտ պիտի դնէնք նրանց նկարագրութեան տակ, ըն-
թերցողներին լաւ հասկացողութիւն տալու համար, որովհետեւ
այլապէս նրանց ամենաճիշտ նկարագրութիւնից էլ ընթերցող-
ները բան չէին հասկանալ:

Անլակատե բառը Յօքրեսենի III, 9 ռամիկ զիւղացին
գործ է ածել ինտէլիցիա վասարանի համար, հետեւաբար

սիւլ չէ մեր համառոտութիւնը. Թարգմանական բառերի պաւակութիւնը երբեմն անհրաժեշտ է լինում բառի նշանակութեան երանգները (սառցէ) բայ պատկանելոյն անվթար բացարելու. միշտ է պ. Ստ. Մտվասանի նկատողութիւնը. թէ Եթորուու բառի դէմ հաւատադրութ բառն աւելորդ է:

Վերջացնում եմ ասելիքս, աւելացնելով, որ ևս շատ լաւ զիտեմ. թէ կատարելութիւնը նաեւ բառարան կազմելու գործում անհասանելի իդէալ է. ևս հաւատացած եմ որ քննադատութիւնը կարող է յայտնի չափով մօտեցնել մեզ այդ իդէալին, եթէ միայն քննադատութիւնը աւելի բազմակողմանի և անքծախնդիր ոգով տոգորուած լինի. Խնչ վերաբերում է «մըրցութեան».... ասպարէզը բաց է:

ՅԱՂԲԱԾԵԱՆ

Կիֆիս, 15-ն հոկտ. 1902 թ.